

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 մայիսի 2001 թվականի, ՌՕ-193) 43-րդ հոդվածի 2-րդ մասի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 6-րդ բաժնում՝

1. 11-րդ կետի 2-րդ սուբյակի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«կյանքի ապահովագրության յուրաքանչյուր դասի վերաապահովագրության իրականացում».

2. 12-րդ կետի 2-րդ սուբյակի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ոչ կյանքի ապահովագրության յուրաքանչյուր դասի վերաապահովագրության իրականացում»:

**ՀՈՂՎԱԾ 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

### **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՆՏԵՆՍԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

22.04.1996թ. Լյուքսեմբուրգում ստորագրված Գործընկերության եւ համագործակցության մասին մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության եւ մյուս կողմից՝ Եվրոպական համայնքների (այսուհետեւ՝ Համայնք) ու դրանց անդամ պետությունների միջեւ համաձայնագրի (ուժի մեջ է մտել 01.07.1999թ.) "Օրենսդրական համագործակցություն" 5-րդ բաժնի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական կապերն ուժեղացնելու համար կարելի է սահմանվել Հայաստանի Հանրապետությունում գործող, ինչպես նաեւ ապագա օրենսդրության մերձեցումը Համայնքի օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել իր օրենսդրությունն աստիճանաբար դարձնել համատեղելի Համայնքի օրենսդրության հետ:

"Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին" (22.05.2007թ. թիվ ՅՕ-177-Ն) ՀՀ օրենքի ընդունմամբ փորձ է արվել համապատասխանեցնելու Հայաստանի ապահովագրության ոլորտը Համայնքի օրենսդրությանը: Սակայն, վերաապահովագրության լիցենզավորման մասով համապատասխանություն չի ապահովվել:

Մասնավորապես, Համայնքի օրենսդրությանը համապատասխան ապահովագրական ընկերություններն իրավունք ունեն միաժամանակ իրականացնելու նաեւ վերաապահովագրական գործունեություն միայն այն դասով, որի համար ունեն ապահովագրության գործունեության լիցենզիա: Ի տարբերություն դրան, Հայաստանում ապահովագրական ընկերությունների կողմից վերաապահովագրության գործունեություն իրականացնելու համար եւս պահանջվում է առանձին լիցենզիա, որը ներառում է կյանքի կամ ոչ կյանքի ապահովագրության բոլոր դասերը:

Ներկայացվող օրենքի նախագծով վերացվում է վերաապահովագրության լիցենզավորման մասով հակասությունը` Հայաստանի Հանրապետության եւ Համայնքի օրենսդրությունների միջեւ:

**Հեղինակներ`** [Վահան Հովհաննեսյան](#), [Արա Նռանյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Արմեն Ռուստամյան](#), [Արտյուր Շահբազյան](#)